## ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՆԵԼՈՒԿ

Թ.

*Առիւծ մի կար խիստ հուժկու,*
*Տորոս լերանց աշարկու.*
*Ըզնա անգութն Ափրիկէ*
*Ի մութ վանդակ կըփակէ,*
*Ըզնա գըթոտն Եւրոպէ*
*Ի պալատի կըփափկէ.*
*Նընջեաց առիւծն ամեհի,*
*Մընաց երկիրն ամայի.*
*Առիւծն այն քար ես տեսայ,*
*Բայց դեռ Տորոս կըդողայ:*

# ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ախալցխոյ բնակիչ Ռափայէլն, որ ճանապարհորդել է վեց տարի իկողմանս Պարսկաստանի եւ հմուտ է զանազան տեսակ աչքացաւ առողջացնելու իւրեան պատրաստեալ դեղորէիւք, իբրեւ որոց կան եւ աչաց ջուրն դադրեցնող եւ կարմրութիւնն ոչնչացնող, առ հասարակ պղտոր աչերն պարզեցնող, ծանուցանելով ցաւագնեալ անձանց, խընդրէ ունենալ ասացեալ դեղորէից:

Ցաւագնեալն պարտ է ճիշդ գրէ իւր տարիքն, ցաւին ո՛ր ժամանակէ սկսիլն, աչաց տեսողութեան եւ ցաւի աստիճանն:

ԳԻՆՆ Է

հին ցաւերու համար . . . . . . . . . . . . . . . . . . 3 րուպլի.
իսկ նորերուն . . . . . . . . . . . . . . . . . . . . . 1 րուպլի:

ՌԱՓԱՅԷԼ.